ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՃԱՌ Ի Ս. ՎԿԱՅՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

Յովհան Մանդակունիի անունով խորագրուած այս ճառը կը գտնուի Ս. Աթոռոյս թիւ 3152 ձեռագիրին մէջ (էջ 406–8), որ երբեմն կը պատկանէր Անթէպի Ս. Աստուածածին եկեղեցիին։ Ընդօրինակուած է 1384ին Կաֆայի մէջ, Ղրիմ։ Յիշեալ ճառը կը կրէ գրչին Իվ համարաթիւը, որուն նախորդող Իվ գլուխը խորագրուած է, «Հրոտից ամսոյ Լ. Վկայաբանութիւն Սրբոց Վարդանանցն և այլոց նախաբարացն և զաւրացն Հայոց որք ի Քրիստոս կատարեցան». առնուած Եղիշէ պատմիչէն (Ե. և Զ. Եղանակներ)։ Այս պարագան հիմ կու տայ ենթադրելու թէ Մանդակունիի ճառին ակնարկած վկաները Վարդանանց նահատակներն են։

Արդ երանելի սրբոց նահատակացն Քրիստոսի՝ պատգամօք կենդանուին քաջալերեալք զաւրացան, և պատուիրանաւ պատուականին հաստատեալք՝ կատարեցան ինքնակամ կամաւք։

Մտին ի մրցանակն ընտրողութեան, և պատուական մահուամբ հասին ի կեանս բնական կենացն։

Սիրողական կամաւք արդարացան, և ցնծալից ուրախութեամբ մխեցան ի դաս երկնային հրեշտակացն։

Մտեալ մտաւք մտին ի գործ տէրունական տարազուն, և կենդանարար մահուամբ վճարեցին զհանդէս նահատակութեան։

Կամողական կամաւք հաւանեցուցեալ զանձինս իջանել ի հանդիսարան ընտրողութեան՝ դէտակն ունելով կենացն բնականաց։

Պար առեալ ճախրեցին ցնծալից ուրախութեամբ, քանզի տեսչութիւն միանական երրորդութեանն մատակարարէ նոցա լինել որդիս աջակողմեանն։

Ցաջողակ ընթացիւք հասեալ ժամանեցին ի կեանս էական կենացն, յորում է հանգիստ լի ցնծութեամբ և ուրախութեամբ։

Հաւատովք գէմ եղեալ յորդորէին զանձինս անցեալք ի հանդիսի նահատակութեան՝ առ ի ժառանգելոյ զբնական կեանս անմահս շնորհօք տալոյ։

Առեալ հայեցան յաւրէնս արդարութեան, և աւրինաբուխ քրտամբք մղեցին զաւրէնս մահարերս մեղացն, և անդադար աղաւթիւք լուծին զթոյնս խանձական մահուն։

Համբերութեամբ մղեցին զպատերազմ, և երկայնմտութեամբ հասին իրին, ուչ եղեալ՝ ակն ունելով կենացն յաւիտենականաց։

Կենօք զկեանս չահեցան, և մահուամբ զարքայութիւնն ժառանգեցին։

Տանջանաւք զտանջանս մաշեցին, և մահուամբ զմահ անարգեցին։

Տանջանաւք չահեցան զկեանս, և մահուամբ գտեցին զարքայութիւնն։

Արդեամբք զարդարութիւն չահեցան, և մահուամբ զարքայութիւնն ըմբռնեցին։

Արդեամբք արդարութեան անցին ի հանդիսի նահատակութեան, և իրաւամբք արդարութեան ժառանգեցին զարքայութիւնն։

Շնչեաց ի նոսա հոգի շնորհաց, քաջալերել զնոսա ի պատերազմի նահատակութեան։

Քաջասիրաք զաւրացեալք յորդորեցին ի հանդիսան նահատակութեան, զի զերկնային բարութեանցն զարքայութիւնն հաւասաւեալ ժառանգեսցին։

Հաւատարիմ սրտիւ և մտերիմ մտաւք ընկեցին զինքեանս ի մրցանակն ընտրողութեան, անարգելով զվայելչութիւն զաւժամանակեայս և զդուզնաքեայ կենացս։

Պարեալ մատուցին արարչին իւրեանց զաշխատութիւն չարչարանացն զերկրային տանջանացս, առ ի ժառանգելոյ զերկնային բարութեանցն զերանութիւնս։

Թեթեւաթռիչք և երագահաս ժամանեցին ի կայանս բնական կենացն, կարեւաք համբերեի[ց]ին կարեաց, և տանջանաւք վճարեցին ի տանջանաց։

Տանջանօք չահեցան զկենդանութիւն, և մահուամբ գտեցին զարքայութիւն։

Տանջեցան վասն արդարութեան, և մեռան վասն արքայութեան։

Մահուամբ մարմնոյ գտեցին զանմահութիւն, և կենդանութեամբ հոգւոյ ժառանգեցին զանանց կեանս։

digitised by A.R.A.R.@

Մահուամբ մարմնոյ կորեցին զկրճիմն մահաբեր մեղացն, և կենդանութեամբ հոգւոյ ժառանգեցին զերանութիւնս։

Մարմնով մեռան յերկրի, և հոգւով կենդանացան յերկինս։

Տանջանաւք մարմնոյ զնեցին զկենդանութիւն, և մահուամբ անձանց ժառանգեցին զքարութիւն։

Մահուամբ մարմնոյ սպանին զմեղս մարդասպանս, և կենդանութեամբ հոգւոյ իւրեանց զարդարեցին զյիշատակս։

Մահուամբ մարմնոյ ջնջեցին յանձանց զկտակն անաւրէնութեան, և կենդանութեամբ հոգւոյ իւրեանց զրեցին զանձինս իւրեանց ի զպրութիւն կենաց։

Մահուամբ մարմնոյ հատին անցին ընդ համատարած ծովն ամենամեղ կենաց, և կենդանութեամբ հոգւոյն հասին ի նաւահանգիստն խաղաղութեան։

Տեսական համբերութեամբ մեռան մեղացն, և մտերմական սիրով կենդանացան արդարութեան։

Մահագոյնս տանջանաւք թաղեցան ընդ երեսակս, և յուսագարդ փառաւք թռեան ընդ առաւաւտս։

Պատժեցին զանձինս մահուամբ մարմնոյ, և յաւրինեալ զարդարեցին զանձինս ամենասուրբ հոգւոյն, և սպանին զմեղս մահաբերս սպանումամբ անձանց իւրեանց, և կենդանացուցին զկեանս կենսաբեր հոգւոյ իւրեանց։

Տանջանաւք մարմնոյ տանջեցին զմահ, և կենդանութեամբ հոգւոյ ժառանգեցին զարքայութիւն. քանզի սիրեցողացն Քրիստոսի՝ կեանք մարմնոյ արհամարհեալ են, և մահ ընթացրեալ։

Ոչ ոք զտանէ զկեանս՝ եթէ ոչ նախ մեռանիցի վասն կենաց։

Ոչ ոք պատկի ասէ. եթէ ոչ լսա աւրինացն մարմրեալ։

Իմաստութեամբ հոգւոյն քննե[ցի]ն զառաջնակայ կենացն զկայանս. և աշխատութեամբ մարմնոյ հասին կենացն բնականաց յորում է հանգիստ յի խաղաղութեամբ։

Մատեալ անարգեցին զանցական զցանկութիւնս պատրոգականս, վասնզի ցնծալից յուսով էին հաստատեալք ի պատրաստ ի նահատակութեան. այնր ազազաւ զկարիս մարմնոյ իրրև զոչինչ համարէին. քանզի անձամբ անձանց զանձեցին զանմահութիւն։

Ճգնազգեաց աշխատութեամբ ճնշեցին զանձինս իւրեանց, և արիւնաշիճք արամբք՝ մարտեան ընդ մեղս մահաբերս. վասն այսորիկ ինքնաբաց լինէր նոցա դուռն երկնային զաւրութեանցն։

Արդ՝ ամենամեծար գովութեամբ բուրեցին զանուշահոտութիւն ազնուականութեան սիրոյն իւրեանց, վասնզի զմիտս իւրեանց յերկինս ուղղեցին, եկ և եկ առնէին՝ վաղահասուկ լինել ի կայանս բնական կենացն։

Հաւատովք տեսին, յուսով ընթացան, սիրով հասին։ Հաւատով նուիրեցան, յուսով ընթացան, սիրով պատարագեցին։ Հաւատով մխեցան, յուսով տանջեցան, սիրով վճարեցան։ Հաւատով հաստատեցան, յուսով փորձեցան, սիրով կատարեցան։

Տեսին և սիրեցին. ցանկացան և հասին. մեռան և պսակեցան։ Արդեամբք արդարացան, իրաւամբք փառաւորեցան, և մահուամբ պսակեցան։ Անարգեցան և պատուականացան, տանջեցան և մեծարեցան։ Իմաստութեամբ ընթացան, գիտութեամբ հասին, համբերութեամբ ժառանգեցին։

Լցին զկափսակ մտաց իւրեանց իւղովն արդարութեան, և լուսաւորեցին զկանթեղ ոգւոց իւրեանց շնորհաւք Հոգւոյն Սրբոյ, և զարդարեցին զպսակս գլխոց իւրեանց մահուամբ անձանց իւրեանց։

Աւրհնութեամբն Աստուծոյ, և զաւրութեամբ Արդւոյն միածնի, և յաջողութեամբ Հոգւոյն Սրբոյ, արարին զանձինս իւրեանց որդեգիրս արդարութեան, և ժառանգորդ աջոյ կողմանն։

Փառք նոցա յերկինս, և յիշատակք նոցա ի բերանս ամենայն բարեպաշտաց. քանզի արժանի յիշատակաց ընթացան. տուեալ զկեանս առժամայն՝ առին զկեանս առյաւպայն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@